Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014թ.
սեպտեմբերի 25-ի նիստի N 40
արձանագրային որոշման

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

| հ/հ | | Միջոցառման անվանումը | Միջոցառման կատարման ժամկետը | Պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը | Միջոցառման ֆինանսական ապահովման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ներդնել համապատասխան իրավական մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր կլինի միավորել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց | «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» (ըստ անհրաժեշտության) ՀՀ օրենքների | 2014 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնել: | | | |
| 2. | Որպես հիմնադրամների առանձնահատուկ տարատեսակ սահմանել անձեռնամխելի կապիտալով հիմնադրամը | «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում և հարակից այլ օրենքներում փոփոխությունների և լրացումների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնել: | 2015 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 3. | ՔՀԿ-ներին հատկացվող պետական ֆինանսավորման առցանց շտեմարանի ստեղծում | Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի տեխնիկական վերազինման աշխատանքների իրականացում, որն կապահովի ՔՀԿ-ների հատկացվող ֆինանսական գործընթացի թափանցիկությունը: | 2015 թվականի հուլիսի 1-ին տասօրյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 4. | ՔՀԿ-ներին ՀՀ պետական բյուջեից տրամադրել հատկացումներ՝ ըստ պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ուղղությունների: | «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում սահմանել համապատասխան իրավակարգավորումներ | 2015 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ ֆինանսների նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 5. | Ուսումնասիրել կամավորականության վերաբերյալ | Կամավորության ինստիտուտի իրավական կարգավորման | 2015 թվականի մարտի 3- | ՀՀ արդարադատության | Ֆինանսավորում չի պահանջ- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | միջազգային փորձը և ներկայացնել առաջարկություններ | մոդելի վերաբերյալ և տեխնիկական լուծումների նախնական տեխնիկական առաջադրանքի մոդելի մշակման տեղեկանք | րդ տասնօրյակ | նախարարություն | վում |